

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Քիմիան որպես բնագիտության մաս:

Քիմիայի հիմնական բնագավառները

Դասարանը --- 7 -րդ Ամիս ամսաթիվ-----

Դասի տևողությունը - 45 րոպե

Դասի նպատակները և խնդիրները

Ակադեմիական

- ❖ Կրկնել և խորացնել 6-րդ դասարանում բնագիտության դասընթացներից քիմիայի հիմնախնդիրների, ուսումնասիրման առարկաների, բնագավառների մասին ձեռք բերած գիտելիքները:
- ❖ Որպես քիմիայի առաջին դաս, կարևորել նրա տարբեր բնագավառներում՝ բժշկություն, էկոլոգիա, էներգետիկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլ տարբեր ոլորտներում քիմիա գիտության առանցքային նշանակությունը:
- ❖ Աշակերտների մոտ ձևավորել քիմիական հետազոտության հմտություններ և կարողություններ, սերմանել սեր և հետաքրքրություն նոր ուսուցանվող առարկայի նկատմամբ:
- ❖ Խթանել աշակերտների աշխարհայացքային գաղափարների ձևավորումը:
- ❖ Խրախուսել ինքնուրույն պատրաստներ, սահիկներ և այլ ստեղծագործական բնույթի աշխատանքներ պատրաստելու կարողությունը:

Սոցիալական

- համալիր բնագիտական մտածելակերպի զարգացում
- խմբային աշխատանքը ճիշտ կազմակերպելու և ժամանակին ավարտելու ընդունակության ձևավորում
- մտքեր փոխանակելու, խմբային աշխատանքների ժամանակ միմյանց օգնելու հմտության զարգացում
- գիտահանրամատչելի գրականության հետ աշխատելու հմտության կատարելագործում
- համացանցի հնարավորությունները կիրառելու կարողության զարգացում՝ տեղեկատվություն հավաքագրելու ուղղությամբ
- կարևորը երկրորդականից տարբերակելու, վերլուծելու, համադրելու և եզրակացություններ կատարելու հմտությունների ձևավորում
- թիմում աշխատելու և թիմակիցների հետ համագործակցելու հմտության ձևավորում

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մ. Գևորգյան

Դաստիարակչական

- ✓ իմացական ակտիվության զարգացում
- ✓ գիատական աշխարհայացքի ձևավորում
- ✓ թիմում աշխատելու կարողությունների դաստիարակում

Դասի տեսակը

- ❖ գիտելիքների ընդհանրացման, համակարգման և համալիր կիրառման դաս

Մեթոդներ և մեթոդական հնարքներ

- խմբային հետազոտություն
- ինքնուրույն և խմբային աշխատանք, պաստառների պատրաստում
- գիտահանրամատչելի գրականության հետ աշխատանք և S2S հնարավորությունների կիրառում
- գնահատում և ինքնագնահատում

Նյութեր և սարքավորումներ

- ✓ գծագրական թղթեր, մատիտներ, գունավոր թղթեր, սոսինձ, գունավոր մարկերներ, պաստառ

Ցուցադրումներ

- ❖ պաստառներ՝ պատրաստված աշակերտների կողմից

Դասի ընթացքի նկարագրությունը

Խթանման կամ ակտիվացման փուլ - (մեթոդ-մտազրոհ /տևողությունը 10 րոպե/)

1. Շատ կարևոր է առաջին հերթին պարզել աշակերտների ունեցած նախնական գիտելիքները, որոնց վրա էլ պետք է կառուցվի նորը: Դա իրականացնում ենք բլից հարցման միջոցով և վերհանում աշակերտների իմացության մակարդակը (մեթոդ-մտազրոհ): Օրինակ.

ա). Որոնք են բանագիտության 3 հիմնական բնագավառները:

բ). Ի՞նչ է ուսումնասիրում քիմիա գիտությունը:

գ). Որո՞նք են քիմիայի հիմնական խնդիրները:

դ). Ինչպե՞ս քիմիան կարող է օգնել շրջակա միջավայրի աղտոտման

վերացման ու կանխման գործում հատկապես ձեր բնակավայրում (թաղամասում):

ե). Ինչպիսի՞ դրական, և ինչպիսի՞ բացասական ազդեցություններ կարող է ունենալ քիմիան շրջակա միջավայրի վրա՝ էկոլոգիական տեսանկյունից:

զ). Անվանե՞ք հատկապես ձեր ընտանիքում օգտագործվող մի քանի իր, որոնք պատրաստվում են քիմիայի օգնությամբ:

2. Բոլոր հնչած պատասխանները գրանցել գրատախտակին և աշակերտների տետրերում:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մ. Գևորգյան

Իմաստի ընկալման փուլ - (մեթոդ-թիմային առաջադիմություն ըստ Ռ.Սլավինի/10ր/) Կարճ դասախոսության միջոցով ուսուցչուհին ներկայացնում և ամբողջականացնում է վերոնշյալ շարադրանքը՝ լրացնելով բոլոր բաց թողումները, որոնք նկատվել էին աշակերտների կողմից: Ավելացնում է առանցքային ու կարևոր բաց թողնված բանգավառները, բացատրում և ուղղում աշակերտների վրիպումները: Կարևորվում է քիմիայի ունեցած անքակտելի կապը մյուս բնական գիտությունների՝ ֆիզիկայի, կենսաբանության, բժշկագիտության նաև մաթեմատիկայի, աշխարհագրության և այլ գիտությունների հետ: Ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի քիմիայի՝ որպես գիտություն, գիտատեխնիկական առաջընթացի հիմաքարը հանդես գալուն: Քիմիայի իմացությունը հնարավորություն է տալիս կանխել շրջակա աշխարհին սպառնացող վտանգները, լուծել էկոլոգիական հիմնախնդիրներ:

Այնուհետև դասարանը բաժանել 4 հոգանոց խմբերի և հանձնարարել յուրաքանչյուր խմբին պատրաստել պաստառ՝ նշելով քիմիայի կարևորագույն ոլորտներն ու բանգավառները, այդ ընթացքում օգտագործել գունավոր մատիտներ, մարկերներ, գունավոր թղթեր և կազմել այնպիսի պաստառներ, ինչպիսիք թույլ կտա յուրաքանչյուր թիմի անդամների երևակայությունը:

Կշռադաստման փուլ - (Տրամադրել 20-25ր.) Այս փուլը տրամադրվում է պաստառի պատրաստմանն ու ներկայացմանը: Եթե դպրոցում կան հնարավորություններ (համակարգչային կաբինետ, պրոյեկտոր և այլն)կարելի է նաև կիրառել ՏՀՏ հնարավորություններ, նախորոք պատրաստած սահիկահանդեսների տեսքով կամ հենց այդ ընթացքում պատրաստել ու ցուցադրել:

Դասի վերջում կատարել ֆրոնտալ հարցում, կրկին պարզաբանել անհասկանալի հարցերը:

Գնահատել խմբի աշխատանքը ներկայացնողներին, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ցուցաբերողներին, կիրառել նաև ինքնագնահատում:

Տնային հանձնարարություն՝ - Դասագրքի §1-1 պարագրաֆը սովորել և կատարել դասի վերջում բերված N1,2,3 առաջադրանքները: Հանձնարարել այն աշակերտներին, ովքեր կարող են ինքնուրույն աշխատել, տանը պատրաստել թեմային համապատասխան որևէ հետաքրքիր նյութ՝ ՏՀՏ կիրառմամբ:

Ստորև ներկայացվում են անցկացված դասից դրվագներ:

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի՝ Մ. Գևորգյան

